ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1

ք. Երևան «6» մարտի 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի Արթուր Սողոմոնյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինարար-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ահարոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) **N 1 Հավելվածով** սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին (**Հավելված N 5**), ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (**Հավելված N 2**):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների **100** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի **N 6 Հավելվածում**:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **10,022,423 (տասը միլիոն քսաներկու հազար չորս հարյուր քսաներեք)** ՀՀ դրամ, որից **1,670,404 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր չորս)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	ՇԻՆԱՐԱՐ-97 ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 05510886
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 163527033183
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Տնօրեն Հովհաննես Ահարոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 6 » մարտի 2020թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Հիմնավ.	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	միավորի գին հազ.դր	Ընդհանուրը (հազ. դրամ) 5x6
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
		II հարկ				
1	E13-5 ԲԿՏՄ	Պատերի կաֆելով երեսապատվածքի քանդում	մ2	2.00	0.50	1.000
4	E23-174 ԲԿՏՄ	Դռների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	մ2	3.40	1.50	5.100
6	E19-70 ԲԿՏՄ	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	1	0.48	0.480
8	E23-171 ԲԿՏՄ կիրարկ.	Հատակների ոչ պիտանի լինոլեումե երեսապատման քանդում	100մ2	0.27	7.10	1.917
11	E23-248 ԲԿՏՄ	Հարկում առաջացած շին աղբից մաքրում՝ տեղափոխությունով	տն	1.986	0.80	1.589
12	E23-225 ԲԿՏՄ	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա ձեռքով	տն	1.986	0.70	1.390
13	E310-10	Շին աղբի տեղափոխում 7 կմ , բեռնաթափում	տն	1.986	1.100	2.185
		Ընդամենը				13.661
		Միջնորմներ, պատեր				
		II հարկ				
1	E8-169	Միջնորմների շարվածք պեմզոբլոկով, 390x190x90մմ,	մ2	38.4	4.50	172.800
2	E8-150	Անցքերի լցում, B 12,5 դասի թեթև բետոն	մ3	1.15	32.10	36.979
	E8-59	Ամրանավորում	տն	0.095	51.73	4.914
3	C124-1-6	Ամրան A-I դասի Φ 6 մմ	տոն	0.052	410.20	21.330
4	C124-3-12	Ամրան A-III դասի Φ 12 մմ	տոն	0.043	410.20	17.639
5	E8-140	Միջնորմների շարվածք պեմզոբլոկով, 390x190x190մմ,	մ3	3.60	25.70	92.520
6	E8-150	Անցքերի լցում, B 12,5 դասի թեթև բետոն	մ3	1.30	30.00	39.000
7	E8-59	Ամրանավորում	տն	0.063	51.73	3.259
8	C124-1-6	Ամրան A-I դասի Φ 6 մմ	տոն	0.013	410.20	5.333
9	C124-3-12	Ամրան A-III դասի Φ 12 մմ	տոն	0.05	410.20	20.510
		Ընդամենը				414.28
		Դռներ				
		II հարկ				

1	C122	/2100(H)x700մմ, 4հատ/ չափերով մետաղապլաստից խուլ դռների տեղադրում, սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	5.88	32.49	191.041
2	C122	/2100(H)x900մմ, 7հատ/ չափերով մետաղապլաստից խուլ դռների տեղադրում, սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	13.23	32.49	429.843
3	C122	/2100(H)x1000մմ, 5հատ/ չափերով մետաղապլաստից դռների տեղադրում, խուլ , սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	10.50	32.49	341.145
4	C122	/2100(H)x1100մմ, 4հատ/ չափերով մետաղապլաստից դռների տեղադրում, խուլ , սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	9.24	32.49	300.208
5	C122	/1500(H)x1000մմ, 3հատ/ չափերով ցնցուղների պլաստիկ դռների տեղադրում,	մ2	4.50	32.49	146.205
		Ընդամենը				1408.4415
		Հատակներ				
		II հարկ				
		Վինիլային հատակներ				
1	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջինը 25մմ հաստ.	100մ2	1.433	90.20	129.257
2	Կալկուլ. Raf-floor	Հատակների վինիլային ծածկույթ, 2մմ հաստ., ինքնահավասարեցնող շերտի և շրիշակների պատրաստումով, II հարկ	մ2	143.30	8.58	1229.514
		Կերամիկական սալիկներով հատակ /սանհանգույց/				
3	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջինը 25մմ հաստ.	100մ2	0.3174	110.10	34.946
4	E11-47 E11-48	Ջրամեկուսիչ՝ շերտ 2 շերտ բիտումային քսուկ	100մ2	0.3174	164.20	52.117
5	E11-57 E11-58	Բետոնային շերտ, 150մմ հաստ., B12,5(M150) դասի բետոն, սանհանգույցում	100մ2	0.036	502.20	18.079
6	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջինը 25մմ հաստ. մետլախի տակ	100մ2	0.3174	110.10	34.946
7	E11-134	Հատակների ծածկի շերտ կերամիկական սալիկներով՝մետլախ, լոգնոցի ջրարգելապատի պատրաստումով	մ2	32.3	4.30	138.890
		III հարկ				
	E11-134	Հատակների շրիշակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով , 10սմ բարձր. 67գծմx0,1մ= 6,7մ2	մ2	6.7	4.30	28.810
		Ընդամենը				1666.558

		Ներքին հարդարում				
		II հարկ				
2	Е14-142 ԲԿՏՄ	Յուղաներկված պատերի լվացում և 2 անգամ բարձրորակ յուղաներկում՝ հին ներկվածքի 35%-ից ավել մաքրումով	100մ2	2.65	101.72	269.558
3	Е14-320 ԲԿՏՄ կիրարկ	Պատերի մակերևույթից ջրաէմուսիոն ներկի մաքրում	100մ2	0.34	13.60	4.624
4	Е15-277-1	Դռների շեպերի բարձրորակ գաջե սվաղ	100մ2	0.15	317.20	47.580
4/1	Е17-140 ԲԿՏՄ	Ջեռուցման սարքերի ապամոնտաժում և մոնտաժում, հարդարման աշխատանքների կատարման համար	հատ	12	2.80	33.600
5	Е15-664	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	3.96	138.20	547.272
6	Е15-258	Պատերի և շեպերի բարձրորակ ցեմենտ-ավազե սվաղ կաֆելե երեսապատվածքի տակ	մ2	201.00	2.82	566.820
7	Е15-82	Պատերի և շեպերի երեսապատում կերամիկական սալիկներով՝կաֆել (նաև սենյակներում)	մ2	171.00	6.20	1060.200
8	Е14-184 ԲԿՏՄ	Հարկի մուտքերի դռների լվացում և 2 անգամ բարձրորակ յուղաներկում՝ հին ներկվածքի 35%-ից ավել մաքրումով	100մ2	0.182	116.65	21.259
9	Е14-290 ԲԿՏՄ	Յուղաներկված ջեռուցման սարքերի և մետաղե խողովակների լվացում և 2 անգամ բարձրորակ յուղաներկում	100մ2	0.50	90.50	45.250
11	Е14-320 ԲԿՏՄ կիրարկ	Առաստաղների մակերևույթից ջրաէմուսիոն ներկի մաքրում	100մ2	0.58	13.60	7.888
12	Е15-665	Բարձրորակ ներկում լատեքսային ներկով	100մ2	1.43	159.60	228.228
13	Е9-102 կիրարկ	Կախովի առաստաղի պատրաստում, սանհանգույց	մ2	31.8	5.20	165.360
		Ընդամենը				2997.639
		Ներքին սառը և տաք ջրամատակարարում				
		II հարկ				
		Տաք ջրամատակարարում				
1	Е16-33 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով Φ20x3մմ	մ	5.0	1.20	6.000
2	Е16-33 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով Φ25x3,25մմ	մ	4.0	1.50	6.000
3	Е16-33 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով Φ32x4մմ	մ	4.0	1.90	7.600
4	Е16-33 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, ալյումինե շերտով Φ40x5մմ	մ	3.0	3.00	9.000
5	Е16-134	Փականների տեղադրում	հատ	5	2.10	10.500
6	Φ-1-III,էջ 10	Փական , Φ15մմ	հատ	5	1.70	8.500
9	Е17-49	Լվացարանի խառնիչների	հատ	3	7.20	21.600

		տեղադրում				
10	E17-49	Ցնցուղի խառնիչների տեղադրում	հատ	3	13.20	39.600
11	E22-365	Ձևավոր մասերի տեղադրում, Φ15 - Φ40մմ	10հատ	1.5	11.50	17.250
12	E16-219	Խողովակաշարի փորձարկում	100մ	0.15	6.60	0.990
13	E16-209	Միացում ներքին ցանցին	հատ	1	6.80	6.800
		Սառը ջրամատակարարում				
15	E16-33 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, Φ20x1,9մմ	մ	10.0	1.20	12.000
16	E16-33 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, Φ25x2,3մմ	մ	4.0	1.30	5.200
17	E16-33 կիրարկ.	Խողովակ պոլիպրոպիլենային, Φ32x3մմ	մ	2.0	1.50	3.000
18	E16-134	Փականների տեղադրում	հատ	7	2.10	14.700
19	Φ-1-III,էջ 10	Փական , Φ15մմ	հատ	5	1.70	8.500
20	Φ-1-III,էջ 10	Փական , Φ20մմ	հատ	1	2.50	2.500
21	Φ-1-III,էջ 10	Փական , Φ25մմ	հատ	1	2.58	2.580
22	E22-365	Ձևավոր մասերի տեղադրում, Φ15 - Φ40մմ	10հատ	1.1	9.50	10.450
23	E18-214	Սառը ջրի զտիչի տեղադրում, Φ40մմ	հատ	1	7.80	7.800
24	E18-214	Սառը ջրի զտիչի տեղադրում, Φ25մմ	հատ	1	7.80	7.800
25	E16-209	Միացում ներքին ցանցին	հատ	1	6.00	6.000
26	E16-219	Խողովակաշարի փորձարկում	100մ	0.25	7.00	1.750
		Ընդամենը				216.120
		Օդափոխություն				
		II հարկ				
		Ցնցուղներ				
1	E20-750	Առանցքային օդափոխիչ առուների մեջ,	հատ	1	38.30	38.300
2	E16-34	Օդափոխության պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում Φ150մմ, ձևավոր մասերով	մ	6	3.00	18.000
3	E16-34	Խողովակ պոլիվինիլքլորիդե, d= 150մմ (կանգնակ)	մ	2	2.20	4.400
4	E10-30	Օդատարների մեկուսացում փայլաթիթեղե երեսապատվածք ունեցող ապակեբամբակով	մ2	1.5	2.00	3.000
5	E20-487	Մետաղական թասակ, d= 200մմ	հատ	1	7.50	7.500
6	E20-407	Օդափոխության կարգավորվող ցանցաշար, Φ150մմ	հատ	4	6.50	26.000
7	E46-45	Միջնորմներում անցքի բացում,	100հատ	0.03	84.10	2.523
8	E46-50	Անցքերի բացում պատերի մեջ,	100 հատ	0.01	418.40	4.184
		Զուգարաններ				
9	E20-750	Առանցքային օդափոխիչ առուների մեջ,	հատ	1	38.30	38.300
10	E16-34	Օդափոխության պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում Φ100մմ, ձևավոր մասերով	մ	6	3.00	18.000
11	E16-34	Խողովակ պոլիվինիլքլորիդե,	մ	2	2.20	4.400

		d= 100մմ (կանգնակ)				
12	E10-30	Օդատարների մեկուսացում փայլաթիթեղե երեսապատվածք ունեցող ապակեբամբակով	մ2	1.3	2.00	2.600
13	E20-487	Մետաղական թասակ, d= 150մմ	հատ	1	7.50	7.500
14	E20-407	Օդափոխության կարգավորվող ցանցաշար, Φ150մմ	հատ	4	6.50	26.000
15	E46-45	Միջնորմներում անցքի բացում,	100հատ	0.03	84.10	2.523
16	E46-50	Անցքերի բացում պատերի մեջ,	100 հատ	0.01	418.40	4.184
		Ընդամենը				207.414
		Ներքին կոյուղի				
		II հարկ				
1	E16-33	Պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Φ50մմ	մ	18	1.50	27.000
2	E16-34	Պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Φ110մմ	մ	6	2.50	15.000
3	E22-365	Պոլիվինիլքլորիդե ձևավոր մասերի տեղադրում,	10հատ	3.0	17.00	51.000
4	E17-21	Կերամիկական լվացարան սիֆոնով,ոտնակով	կ-տ	3	33.10	99.300
5	E17-62	Կերամիկական զուգարանակոնք ջրթող բաքիկով	կ-տ	4	34.10	136.400
6	E17-36	Հոսակ 50մմ տրամագծով	հատ	5	5.20	26.000
7	E16-219	Խողովակաշարի փորձարկում	100մ	0.27	7.10	1.917
8	E16-212	Միացում ներքին ցանցին	հատ	1	9.20	9.200
		Ընդամենը				365.817
		Ներքին էլեկտրալուսավորություն				
		II հարկ				
		1. Մոնտաժ-ին աշխատանքներ				
1	E8-402-2	Հաղորդալարի թաքնված լարանցում	100մ	0.2	23.80	4.760
2	E23-120 ԲԿՏՄ	Գաջե սվաղի վրա ակոսների բացում	100մ	0.1	15.80	1.580
3	E8-591-2	1 ստեղանի անջատիչի փոխարինում,	հատ	2	1.00	2.000
4	E8-591-10	2 ստեղանի անջատիչի փոխարինում,	հատ	30	1.00	30.000
5	E8-591-7	Խրոցային վարդակի փոխարինում	հատ	4	1.00	4.000
6	E8-601-1	Առատաղի լուսատուների տեղադրում, 60վտ, LED	հատ	33	1.00	33.000
		Մոնտաժ-ին աշխատանքներ սանհանգույցում				
7	E8-591-2	1 ստեղանի անջատիչ	հատ	7	1.00	7.000
8	E8-418-1	Պոլիէթիլենային խողովակների անցկացում	100մ	0.10	15.10	1.510
9	E8-409-1	Հաղորդալարի անցկացում խողովակով	100մ	0.2	10.40	2.080
10	E8-603-1	Սանհանգույցներում լուսատուների տեղադրում,	հատ	14	0.40	5.600

		LED 12վտ				
		2.Նյութերի արժեքը				
11	market	Խրոցային վարդակ , 250Վ. 16Ա,	հատ	3	1.00	3.000
12	market	Տուփ բաժանարար	հատ	5	0.10	0.500
13	market	Տուփ տեղադրման	հատ	15	0.09	1.350
14	market	Անջատիչ 1 ստեղանի,	հատ	2	1.00	2.000
15	market	Անջատիչ, 2 ստեղանի,	հատ	24	1.20	28.800
17	market	էլ. հաղորդալար ՊՊՎ, 2x 1,5մմ.ք	մ	20	0.15	3.000
18	market	Առատաղի լուսատուներ, 60վտ, LED	հատ	33	3.40	112.200
		Նյութերի արժեքը սանհանգույցում				
19	market	Տուփ բաժանարար	հատ	3	0.20	0.600
20	market	Տուփ տեղադրման	հատ	7	0.09	0.630
21	market	Անջատիչ 1 ստեղանի,	հատ	7	1.10	7.700
22	market	Պոլիէթիլենային խողովակ d=16մմ	մ	10	0.09	0.900
23	market	էլ. հաղորդալար ՊՊՎ, 2x 1,5մմ.ք	մ	20	0.15	3.000
24	market	Սանհանգույցներում լուսատուներ, LED 12վտ	հատ	14	3.40	47.600
		Ընդամենը				302.81
		Ընդամենը				7592.745
		Ինքնարժեք				7592.745
		Շահույթ	10.0%			759.275
		Արժեք				8352.020
		ԱԱՀ	20.0%			1670.404
		ԸՆԴԱՄԵՆԸ				**10022.423**

* Կապալառուն աշխատանքները կատարում է **Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն**ում: *Սույն պայմանագրի կատարումն իրականացնելու համար անհրաժեշտ է* ***<<Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում>>*** *լիցենզիա «**Բնակելի,հասարակական և արտադրական**» ներդիրով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Մորոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՇԻՆԱՐԱՐ-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի,
Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝ 05510886
Հ/հ՝ 163527033183
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ

Տնօրեն
Հովհաննես Սիմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
« 6 » մարտի 2019թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1** ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	*Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում*	*Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից*	*45 օր*
ԸՆԴԱՄԵՆԸ			*45 օր*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՇԻՆԱՐԱՐ-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի,
Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝ 05510886
Հ/հ՝ 163527033183
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Տնօրեն
Հովհաննես Ահարոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 6 » մարտի 2019թ. կնքված
***ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի												
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			2020թ.										Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	
1	45461100/4	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423	10,022,423

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	ՇԻՆԱՐԱՐ-97 ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 05510886
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 163527033183
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Տնօրեն Հովհաննես Ահարոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 6 » մարտի 2019թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 6 » մարտի 2019թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
« 6 » մարտի 2019թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1** ծածկագրով պայմանագրի*

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	ՇԻՆԱՐԱՐ-97 ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝ 00846441	ՀՎՀՀ՝ 05510886
Հ/Հ՝ 900018001231	Հ/հ՝ 163527033183
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Տնօրեն Հովհաննես Ահարոնյան
---------- /ստորագրություն/	---------- /ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 6
« 6 » մարտի 2019թ. կնքված
***ՀՇ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/105-1** ծածկագրով պայմանագրի*

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	Նյութերի անվանումը	Բնութագիր	Երաշխիքային ժամկետների նվազագույն պահանջները (տարի)
1	Ամրան	ГОСТ 34028-2016	-----
2	Մետաղապլաստ դուռ	ГОСТ 30970-2014	3
3	Վինիլային հատակ	2 մմ հաստության, պաշտպանիչ շերտը 0.7մմ	5
4	Կերամիկակական սալիկ	ГОСТ 6787-2001 գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ	5
5	Լատեքսային ներկ	ГОСТ 52020-2003, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ	3
6	Ցեմենտ	ГОСТ 31108-2003	-----
7	Կաֆել	ГОСТ 6141-91 գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ	5
8	Պոլիպրոպիլենային խողովակներ	ГОСТ 32415-2013	5
9	Լվացարանի խառնիչ	ГОСТ 25809-96	2
10	Ցնցուղի խառնիչ	ГОСТ 25809-96	2
11	Պոլիվինիլքլորիդե խողովակներ	ГОСТ 32413-2013	5
12	Կերամիկական լվացարան, զուգարանակոնք	ГОСТ 30493-2017	5
13	Էլ. Հաղորդալար ՊՊՆ 2x1,5	ГОСТ Р 50571.5.52-2011	3
14	Լուսատու LED 60վտ	ГОСТ Р 54815-2011	1
15	Կերամոգրանիտ	ГОСТ 57141-2016	5

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՇԻՆԱՐԱՐ-97 ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի,
Տեքստիլագործների 29/3
ՀՎՀՀ՝ 05510886
Հ/հ՝ 163527033183
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Շիրակ մ/ճ
Տնօրեն
Հովհաննես Ահարոնյան

/ստորագրություն/
Կ.Տ